

# ՕՆՓԻՒՌ

## ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ինչ որ խմբագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերէ ի պէտք է ուղղել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐԹՈՒՔԱՆԵԱՆ, Պօլսա Մերձանը Իմամ — Ի՛նչ խան, Թիւ 4 : — Ընկալար նա մակ կամ ծրար կը մերժուի : Օրագիրն տուն շարժու ճինգշարթի օրերը կը հրատ րփուի : Վեցամսեայ շրջանին գինը 20 լուրուշնոց արժաւ Զէյթը ԿՐՆԻՍԻԿ ՎՃարելի, ամեն Թիւէ կրնան ստորագրուիլ : — Ի՞նչու երթալիք Օրագրաց Զամբու ծախքը առնողին վրայ է : — Ծանուցման տողը 1 լուրուշ :

ԲԱԺԱՆՈՂԻՒԳՐՈՒԹԻՒՆԻ ԿՐՆԻՍԻԿԱՆ Կ. ՊՕԼԻՍ Օրագրոյս գրասենեակը : — Թիֆլիզ Մեծարդոյ Աղբաւակը աղա Երեցեան : — Զմիւռնիա Մշակուոյ գրասենեակը : — Թէքիրտաղ Պ. Թաղուր Ֆէտեան : — Կէյվէ, Օրթագիւղ, Ղընճլար Պ. Խաչատուր Մանուէլեան : — Տրապիզոն Պ. Խաչատուր Էրմանեան :

### ՀԱՆԴԵՍ

Գ. ՏԱՐԵԴԱՐՁԻ

### ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի ՀԻՒՆԲԵԱՐ ԻՍԿԵԼԵՍԻ

Ո՞ր սիրտ չբերկրիր՝ եթէ ազգին սիրովը վառուած է. ո՞ր աչք կրնայ անտարբեր նայիլ անանկ հանդէսի մը՝ որ թէպէտեւ նոր բայց յանկարծական շարժման մը արդիւնքն է :

Դաշտերը՝ որ երբեմն (ինչպէս և սակաւ բացառութեամբ հիմա) աշխարհակալութեան անսաստ կրից և փափաքանաց և արիւննուշտ պատերազմներու ասպարէզներ էին, այսօր ի չնորհա քաղաքակրթութեան՝ բարեկիրթ ազգաց սիրոյ՝ միութեան՝ եղբայրութեան՝ խաղաղութեան և բարեկամութեան սրբազան ու չնաշխարհիկ ուխտերը տօնելու հանդիսաւորանն եղած են : Այն խրոխտ և արիւնանազանք կամարները՝ որ յաղթականին փառաց (եթէ փառք կոչել արժանի է երբեք) և հպարտութեան յաղթանակն էին, այսօր սիրոյ՝ միութեան՝ ազգասիրութեան և մարդասիրութեան դրօշը կը կրեն : Եւ որ բիւր ցանկալին է՝

զմարդիկ իրենց հայրենի աւերակացը տակ թաղելու համար հաղարներ միացած սուր ի ձեռին զիրար խողիողելու կարշաւին, այսօր վարդ ի ձեռին սուրբ ու անկեղծ սիրով զիրար ողջունելու՝ համբուրելու՝ սիրելու և դուրգուրալու կը դիմեն :

Դարուս այս նշանաւոր իրադիտութիւնը՝ որ ժամանակիս և քաղաքակրթութեան սքանչելի ծնունդն է միայն, քաղաքակրթութեան կարեւորագոյն սկզբնաւորութիւնը կ'աւետէ մեր ազգին, որուն արժանաւոր արդիւնքն է այն բարեբաւտ ապագան, որ պիտի ըլլայ մարդկային ընկերութեան երջանկութեան դարը. և իսպառ պիտի հալածէ այն պղտոր ու նախապաշարեալ գաղափարը՝ որ արհաւիրքը՝ քաղաքականութիւն, զօրութիւնը՝ իրաւունք, նախապաշարումը՝ հաւատք, ազատասիրական շարժումը՝ ապստամբութիւն, ազատամտութիւնը՝ անհաւատութիւն ևն կը թարգմանէ :

Աշխարք դարերէ ի վեր այս անտանելի վիճակին մէջ էր, և ինչպէս չըլար, քանի որ ժողովուրդը իր իրաւանցը անհմուտ՝ կամ զայն պաշտպանելու անձեռն հաս էր, քանի որ ազատ խորհիլ և ազատ



գործէին ի՞նչ է երևակայած անգամ չէր ,  
և քանի որ փոխանակ օրինաւոր իշխա-  
նութեան՝ տգիտութիւնը աշխարհաւեր  
ճիգով թուլեան հետ ժողովուրդին բա-  
րոյակնուածեանը՝ սրտին և կամացը վը-  
րայ բացարձակապէս կիշխէին :

Բայց այն գերադոյն բարեաց Տէրը՝  
որուն սրտտես աչբըր մինչև երկրիս խո-  
րերը կը զօրէ տեսնել ակնթարթի մէջ ,  
տեսաւ թշուառ ժողովուրդին այս գթու-  
թեան արժանի վիճակը և դատապար-  
տեց զայն , որ իր բարերար ակնարկու-  
թեանը դէմ էր ծայրայեղ հակասու-  
թեամբ . և չուզելով բուն իր իր մեծա-  
գործ ձեռաց արդիւնքն եղող սիրելի և  
թշուառ ժողովուրդը այնչափ ժամանակ-  
ներէ ետև դարձեալ թշուառութեան  
տակ հեծէ ու հառաչէ . չղացաւ ահա՛  
երկնքի բարձրերէն զթուլեան աչք մը  
ուղղել :

Ծագեցաւ այն գեղածիծաղ արշալոյ-  
սը , ծագեցաւ վերջապէս հաշտութեան  
երփներանգ ծրածանը , յորում քաղա-  
քակրթութեան առիջին քայլերն առին  
Եւրոսիոյ աշխոյժ ժողովուրդները . այն  
ժողովուրդները՝ որոնք երբեմն վայրենի՝  
բայց այսօր ազգաց իրաւանց և ազատու-  
թեան ջերմ պաշտպանն են : Ո՛վ էր այս  
ժաղովրդոց նոր մղում տուողը : — Բա-  
ղաքակրթութիւնը :

Երկրպագէ՛ր՝ անուն :

Երկրպագելի ըսինք , վասն զի մարդ-  
կային ազգի սիրելագոյն բաղձանաց կա-  
տարումը քաղաքակրթութեան մէջ ըլ-  
լալուն տարակոյս մնացած չէ երբեք : Ա-  
սիկա՛ ինչպէս յայտնի է , Պիւթագոր-  
էան «*Եւ առաջ*» չէ , ոչլ մեթեմաթի-  
քական անհերքելի փաստերով հաս-  
տատուած իրողութիւն մ'է :

Բաղաքակրթութիւնը՝ որուն ետեւէն  
այնչափ շուտ և զմայելով կը դիմէ Եւ-  
րոպիոյ ժողովուրդը , միայնակ անոր հա-  
մար երկնային առանցնաշնորհութիւն մը  
չէ , ինչպէս որ ասանկ կը դատեն ոմանք ,  
այլ երկնային այս սքանչելի և փրկաւէտ

շնորհումը հասարակաց է . ուրեմն Հայ  
հասարակութիւնն ալ իրեն համար բա-  
ժին ունի այս շնորհումէն , և ահա՛ իր  
այս բաժինը ձեռք բերելու համար զար-  
մանալի բարեգիւրութեամբ յամր կար-  
ծուած ժողովուրդը խրտեցաւ յանկ-  
կարծ . բայց գեղեցկին՝ բարեոյն և ճշ-  
մարտին երգուեալ հակառակօրդը այս  
անգամ ալ ուղեց իր յաղթանակը կանգ-  
նել ՚ի փաստ և ՚ի կործանումն Հայ հա-  
սարակութեան : Աւելի զարմանալին և  
ցաւալին սա է որ , բուն Հայուն ձեռ-  
քով ուղեց կանգնել իր յաղթանակը ,  
և պիտի յաջողէր իսկ , եթէ բարերար  
ձեռք մը չարգիլէր զայն :

Ազգին բարեոյն ու օգտին նախան-  
ձախնդիր եղող մասին ողբոց ու հեծու-  
թեան տեսարան մ'էր այս . սակայն ու-  
րիշ անդամներու պէս անտարբէր կենա-  
լին ալ ամօթ ու նախատինքսեպեց ՀԱՅ  
անուան : Շարժեցան օտար սրտեր , և  
քաջալեր հանգիստացան , և յետ փոթոր-  
կալից անձրեւէ մը՝ ծագեցաւ վերջապէս  
այն յուսալից առաւօտը ՚ի ցնծութիւն  
ազգային յառաջագիմութեան բարեկա-  
մաց :

Օրհնեց այն օրը , օրհնեց Ն. Կ. Վ. Ե.  
հափառութիւնը իւր Օգոստափառ Տէ-  
րը , Արնոր գթութեան աչքով նայեցաւ  
Հայոց այս տխուր տեսարանին վրայ և  
ազատամիտ մարդասիրութեամբ բարե-  
հաճեցաւ փաւերացնել Ազգին կասն ու  
հոգին եղող ՍՍ. ՀՄՍՆԱ. ԳՐՈՒԹԻՒՆԸ ,  
որ անշուշտ մեծ ու զմայելի շնորհում  
մ'էր ազգերնուս :

Մեծ շնորհում մը ըսինք , և իրա-  
ւոք , վասն զի մինչդեռ այն Հայը՝ որ իր  
ազգին երջանիկ ապագան սխտրաստող  
կերպաւորութեան վրայ անտարբէր կը  
նայէր , և յանձինս երգուեալ անոր չէնքը  
իւր ազգախորժան ձեռօքը քայքայելու-  
ղէր մեծ անմտութեամբ , ո՛հ , բարե-  
բա՛ր Աստուած , ի՞նչ զարմանալի էն  
քու գործերդ , որ կրօնքով և ազգու-  
թեամբ օտար՝ բայց գթութեան և բղ-





դադարեալն հանգիստի մը ներկայ գտնուիլը :

Ժամը ութին ճաշն աւարտելով այլ և այլ անձանց կողմանէ ատենախօսութիւններ եղան , որոնց առաջինն էր Ար. Գոյ Օրսէն աղա Շահնեան գիտնական անձը՝ որ նոր ազգային վարժարանաց աւաջին դասաւորու է տաճկերէն լեզուի :

Հանդիսականը նուագարաններու և ազգային երգերու գողար ներդաշնակութեամբ մինչև ժամը իննուկէս զուարճանալով իւրաքանչիւր ոք յատկացեալ շոգենաւաններով դարձան իրենց տեղը :

Չկար ճշմարիտ Հայ մը՝ որ չօրհներ նոյն աւուր հանգիստը , նոյնպէս չկար Հայ մը՝ որ չօրհներ մեր առատագութիւննակալը :

Ահա այս կերպով վերջացանոյն աւուր հանգիստը , թէպէտ և մէկ քանի պակասութիւններ տեղի ունեցան , սակայն կը յուսանք որ Ար. Գոյ հասարակութիւնը յօժարութեամբ ներդաշնակ կըլլայ այնչափի մը : Եւ աւելի յուսալի է որ ապագային մէջ աւելի նախըջուշութիւններ կըլլան : և այս պակասութեանց ալ զըլխաւոր պատճառը հանդիսականաց անախնկալ Բազմութիւնն էր . վասն զի հանդիսագիր յանձնաժողովը մինչև շաբաթօրը ծախուած տոմսակներուն համեմատ պատրաստութիւն տեսած էր :

Մենք այս չափին գոհ ըլլալով՝ որ ծանր ու ազգին պատուին դաշէլք պակասութիւններ տեղի չունեցան երբէք , կը յայտնենք մեր խորին չորհրդակալութիւնը յանձնաժողովոյ յարգի Անդամաց :

## ԻԼՏԵԿՈՆՏԱ

ՏԼԱ ԹԻԼ 47

### ԱՐԱՐՈՒՍԾ ԵՐԿՐՈՐԳ

Նոր բաժնէ անդարդ սենեակ մը : Գլխացը պատահա՛ն երկաթապատ որ դուռը պարտէ՛նք որ վրայ կը նայի : Երկու կողմնակի դուռներ : Դերա-

սաններուն ալ կողմի դուռը հասարակաց դուռն է , որ նեղ ճամբան կը հանէ , եւ հանդիսատեսներուն գլխացը կիցայ , այնպէս որ թէ մանեղու և թէ եղեղու ասենք՝ ուրիշ դռներն եկող գացող անձներ կը տեսնուին , իսկ ձախակողմէն դուռը ուրիշ սենեակի մը դուռ է : Տեսարանին վրայ որմնադրի և հիւսան քանի մը գործիչներ պիտի գտնուին :

### ՏԵՍՏԱՆ Ա.

Չորս արհեստաւոր կենդանագիրք՝ պատահա-նին եւ հասարակաց դռն մէջ տ' զի պատէն վար կախեալ զբաղած են : Ինցցարուն ալ կողմը նստած է , թէպէտ Գիւլիւր , որ կենդանագիրք կը նայի : Կարգին ոտքի վրայ : Անոր գլխացը Գրանդէքան որ ուշադրութեամբ միտ դնել կը ձեռնէ : Վարադարը բացուելն ետք , կարճ լուսութիւն մը :

ՓԲԱՆ . Այլրիք , շատ աղէկ , ատդիլքը աղէկ է : Ի՞նչ գեղեցիկ տիկին , կ'ըսուի որ իր գեղեցիկութեան չափ ալ բարի էր : Խեղճ Խլտէկոնտա , որչափ ատեն է որ մօրդ կենդանագիրք կ'ուզէս . . . ահա՛ : Բայց երա՛նի թէ անով միտքարուէիր . . . Աստուած տար : (Ի՞նչեւէ չը շարունակէ) :

ԹԷԳ . Ինչ ունիս , հայր : Հիւսանդ ես :

ՐԻՑ . (հաճախելով) Չէ՛ , տղաս չէ՛ :

ԿԱՍ . Ինցցարուն . . . Ի՞նչ կ'ընես :

ՐԻՑ . (դաժ չայնով) Բարեկամ , սիրելի ամուսինս հիմա պիտի տեսնեմ . կարօտէս կը տողորմ , շիլերուս ամեն մէկ թիւը կը թողայ :

ՓԲԱՆ . Կախեցիք լինցաւ :

Ա. ԱՐԷ . (յարաճ գալով) Դեռ քիչ մը գործ կայ :

Բ. ԱՐԷ . Քիչ մը մարբելու էինք . . .

ՓԲԱ . Հիմա մարբել հարկ չէ , այս չափը բաւական է , ատդին եկէք . . . Բայց դուն ի՞նչ ունիս :

ՐԻՑ . Ե՛ս , բան մը չունիմ (ապիկէլէնէ) դուն խօսք առաջ տար :

ՓԲԱ . Թշուառ Խլտէկոնտա քիչ մը ետքը հոս պիտի գայ , աս սենեակներն անոր համար շինուեցան , այսուհետեւ ինք հոս պիտի բնակի : Բժիշկը պատուիրեց որ



պէտք եղած բաները պատրաստեմ, եւ բոլոր զինքը պիտի առնէ բերէ, թերեւս հիմա կու գան • ես դիմաւորել պիտի երթամ :

ԲԻՑ . Ինք ի՞նչպէս է :

ՅԲԱՆ . Շատ աղէկ չէ, վրան ատեն ատեն կատաղութիւն կուգայ, կը ցնորի . . . : Խեղճ վիճակի մէջ է :

ԲԻՑ . Եղբւր . . . :

ՅԲԱՆ . Հիմա ամենքդ ալ դուրս ելէք, կարելի է տեսնուիլ չուզեր : Իմ տոջի սենեկիս մէջ քիչ մը դորձ կայ, հիմա զայն լնացողք, ետքը երբոր ինք հոն անցնի, հոս ուղածնուդ պէս կրնար շտկել :

ԿԱՍ . Ի՞նչպէս որ կ'ուզես :

ԹԻՊ . Բայց այն տիկինն ինծի ցուցնելու խօսք տուիր :

ՅԲԱՆ . Այո աղաս, պիտի տեսնես, բայց հիմա չլրար :

ԹԻՊ . Ըսիր որ շատ մարդասէր է, կ'ուզեմ ձեռքը պագնել :

ՅԲԱՆ . Պիտի պագնես մի՞ տարակուսիր : Ի՞նչ սիրուն զաւակ է : Հրամանքդ բողբոսոր հայր ես, որ ասանկ զաւակ մը ունիս : Իրտէկոնտա ալ հիմա այսչափ զաւակ մը ունեցած պիտի ըլլար : (Թէպէտ Երանայի ու Նարայի հետքերը կը տեսնուի) Որչափ պիտի միջթարուէր, եթէ զաւակը հետն ըլլար : Բայց ո՞վ գիտէ հիմա ուր է : Գժբա՞ղդ կին . . . մօրմէն, ամուսինէն ու զաւակէն զուրկ, հոս բանտարկուած . . . քանի որ այս բարի կնոջը թշուառութեանը վրայ կը խորհիմ, արցունքս չ'եմ կրնար բռնել :

ԹԻՊ . Ուրեմն խօստմունքդ յիշէ :

ՅԲԱՆ . Ապահով եղիր աղաս : Աղէկ միտքս ինկաւ, եթէ Միլանի մէջ երկայնատեն պիտի կենար, ձեզի շինել տալու ուրիշ բաներ ունիմ : Սա պատը կը տեսնէ՞ք մէկը ան է (պատկերներն արդէս պարզ կը շարունակուին) սա պատը գիմարի վաճառիկ պաշտօնը հասարակաց էմ :

Բէն կը գատէ : Նայեցէք, տեղ տեղ անձրեւէ մաշած եւ փլած, մարդ վրան կրնայ ելնել, կ'ուզեմ որ փլած տեղերը աղէկ մը շինէք : Մինչեւ հիմա հոգս չէր, քանզի այս կողմը մարդ չէր բնակեր • բայց հիմա իրաւունտա այս ստորերկրեայ տեղերը պիտի բնակի • երբեմն պարտէզն ալ կը հանեմ . . . հետաքրքիր մարդիկ շատ . . . կրնան պատին առջին դալ, ու խեղճն անհանգիստ ընել . . . չեմ ուզեր որ անհանգիստ ըլլայ : Աշխատած օրերնիդ ձեզի հոս քանի մը պարտալ սենեակ կուտա, հոն պառկեցէք : Մի՛ վախճար ձեզի ձրի չեմ աշխատոյներ, վարձքերնիդ կուտամ :

ԿԱՍ . Ծառայելու պատրաստ եմ :

ՅԲԱՆ . Ուրեմն հասկցար, ես իրտէկոնտան դիմաւորել կ'երթամ : Հիմա դուք շուտով սա աւերադ բաները դուրս հանեցէք, ետքը դուք ալ դուրս ելէք : Սընար բարով իմ ազնիւ գործաւորներս, դուն ալ մնաս բարով սիրուն աղաս . . . Ի՞նչ անուշ դէմք . . . Ի՞նչ սիրուն արտաքին . . . (ալ ինքն իրեն հետքեր կ'ուզէ) :

ԲԻՑ . Տե՛ս դու թը ի՞նչ սրտերու մէջ կը բնակի . . . բանտապահ կին մը . . . դու թ' ունենայ . . . :

ԿԱՍ . Սքանչելի սիրտ ունի • (արհեստագործները Երանայի հետքերն) Հիմա, բարեկամներ, ահա մեր փափաքած նպատակին վերջը հասանք : Ձեր աննամե հաւատարմութեանը մեծապէս պարտաւոր եմ :

ԲԻՑ . Ձեռք մեծ մարդասիրութիւն տեսանք :

Ա . ԱՐԷ . Այսչափ զարմանալու ի՞նչ կայ : Իմանալով որ հոս պիտի աշխատէինք, մեզի աղաչեցիր որ ձեզ իրերու մեր արհեստակիցները մեր հետն առնենք : Ձեր նպատակը մեզի յայտնեցիք, մէնք ալ երդում ըրինք, որ առանց երբէք ձեր դաշտնիքը յայտնելու ձեզի գործակից ըլլանք, եւ խոսք



տուժնին կատարեցինք : Ուստի ուրիշ բան չ'ըրինք , միայն սրբազան պարտք մը կատարեցինք :

ԿԱՍ . Բայց վարձատրութիւն մը . . .

Բ . ԱՐՀ . Թո՛ղ ձեր վատիարները յաջող ելք մը ունենան , այն մեղի բաւական վարձատրութիւն է : Արդէն ա՛մեն բան պատրաստ է :

Ա . ԱՐՀ . Ո՛վ կրնայ կատարել որ այս երկաթէ վանդակը շարժական է , եւ կրնայ բացուիլ : (Մո՛րձով երէւթնէրո՞ն է շո՛քնէ) : Ո՛ր մարդկային աչք ա՛սոր գաղտնիքը կրնայ գտնել , մէկը չըկրնար գուշակել կամ գտնել : Այս գործին մէջ մեր բոլոր հանճարը յայտնեցինք :

ԿԱՍ . Մանֆրէտն ալ ձեր հանճարը ու աշխատութիւնը կրնայ վարձատրել , բայց դուն՝ , Ռիցցարտո , ինքզինքդ չափաւորէ՛ : Կը լիշե՛ս : Այն խեղճին ի՛նչ ցաւեր պատճառեցիր , երբ յետին անխոհեմութեամբ գիշեր ատեն սեւ հանդերձներով մերձակայ բարձրաւանդակին վրան գալով տխուր երգելով ձայնդ լսել տուիր : Ա՛ն ատեն՝ այս միջին տեղեր անոր յուսահատութեան աղաղակներէն արձագանք կուտային :

ՐԻՑ . Ճշմարիտ է :

ԿԱՍ . Այս գիշեր Խլտէկոնտան ազատելով՝ արագընթաց ճամբով Լօտի տանինք , ամեն միջոց պատրաստ է : Հոն իմ պալատու ամենուն համար ապահով տեղ է , մինչեւ որ իմ ձեռքովս պարագաները ժողուելով գործը տարբեր կերպարանք մը առնէ :

Ա . ԱՐՀ . Եթէ այս գործին համար մենք ալ ձեզի օգնութիւն մը կրնանք բնէլ , պատրաստ ենք :

Բ . ԱՐՀ . Սմենուն քաջութեանը վրան վստահ եղիք :

ԿԱՍ . Վեհա՛նճն մարդիկ , եկեք զիրար սիրով համբուրենք : Ռըչաի ճշմարիտ է որ թշուառներու հետ տեսնուիլը

չառ անգամ աւելի , զուարճալի եւ աւելի օգտակար է քան թէ մեծամեծ ներու փառաւոր ընկերութեանը մէջ գտնուիլը :

Ա . ԱՐՀ . Դուրսը ձայն մը կայ :

Բ . ԱՐՀ . Այլ կողմի նեղ ճամբուն վրան ոտնաձայն կայ :

ՐԻՑ . Խլտէկոնտա՛ն է :

ԿԱՍ . Ուրեմն , շուտով մենք սա ձախ կողմի դռնէն դուրս ելլենք : Թէպա՛լտո , ԹԵՊ . Հոս եմ :

ԿԱՍ . Երթանք . ( Արհեստահանները խնի մը հարասի համ գործիչ հասնեն ու յախ Գողմէն դուրս կ'ելլեն ) :

ՐԻՑ . Տէ՛ր Աստուած . . . ի՛նչ վայրկեան . . .

ԿԱՍ . Ինքզինքդ զսպէ՛ , Ռիցցարտո , հիմա ետեւէս եկուր ( Թէպալտօյին հետ նոյնպէս յախ կողմէն դուրս կ'ելլեն ) :

ՏԵ ԱՐԱՆ Բ .

Քիշ մը ետքը ՖՐԱՆՉԷՍԻՍԻՍ դրանը սեմին վրան կը կենայ , ու ելողներուն ետեւէն կը նայի :

ՖՐԱՆ . Աղէ՛կ . . . Հնազանդեցան : Այս կողմէն կ'երթան : ( Եկած հողմը դուրսն առնէ ) Խլտէկոնտա կը վազէ . . . շատ տկար է , ( ներս է մտնէ ու առաջ կ'երթայ ) : Ասոր նման դէպք մը պատահած չէր , քառասունը հինգ տարիէ , որ հոս բանտարկուած ողորմելիներուն պահպանութիւն կ'ընեմ , ամենուն ող հաւասար սիրով կ'օգնեմ , բայց մէկու մը համար այսչափ կարեկցութիւն զգացած չէի , ( Եկէ մը հանկէ հասնէ ) :

ՏԵ ԱՐԱՆ Գ .

ԻՆՏԷՎՅՈՒՏԱՆ ԲՕՊԷԻԹՕ Թեղ մտած է , և ՖՐԱՆՉԷՍԻՍԻՍ :

ԲՕՊ . Քաջալերուէ՛ , տիկին , ահա՛ եկանք :

ԻՆՏ . Չորս տարի է որ բանտն եմ . . . ոտուրներս կը դողդղան . . . հազիւ ոտքի վրայ կրնամ կենալ :



ԲՕԳ. Հոս, այս սենեակներուն մէջ  
աւելի մարտը, եւ աւելի առողջ օդ մը  
պիտի չնշէք :

ԻԼՏ. Ուրեմն նոր բանտս այս է :  
Հայր մի . . . Կուտրերանի Մարգիղը աս  
բանտը ինծի համար չինել տուաւ : Բայց  
ի՞նչ յանցանքի համար մշտնջենաւոր  
բանտարկութեան դատապարտուած եմ :  
Արդ-որ երկիրը . . . յանցանքս ի՞նչ է :  
( ախ-ի՛ մը Վրացի է՛իցայ, « Եղանի մը դով,  
հասարակաց դռանը դիմացը ) :

ԲՕԳ. Համբերէ՛, որդեակ, համբե-  
րէ . . . ցաւերուդ վերջ տուր : Թերեւս  
բարերարն Աստուած աղօթքիդ ձայնը  
լսէ, ու զքեզ երջանիկ ընէ, նոյն իսկ  
Հայրդ . . . :

ԻԼՏ. Ի՞նչ, պարոն : Զաւկի մը հա-  
մար առ անհաճելի անունը, իմ սրտիս  
մէջ սոսկում կը պատճառէ . . . կը քրտա-  
մնիմ : Կ'ազաչեմ այդ անունը ինծի մի՛  
յիշեցնէք, ապա թէ ոչ յուսահատու-  
թիւնս կ'աւելցնէք ( « Եղանի մը Վրացի է՛իցայ » ) :

ՖԲԱՆ. Խեղճ զաւակ, իբրեւանք ու-  
նի ( « առանցիկ » ) :

ԲՕԳ. Նորէն խորին ցաւերու մէջ ըն-  
կըղմեցաւ . . . Ֆրանչեսկա, խեղճը մեծ  
առաւապանաց մէջ է, եւ քու ղթած խնա-  
մացդ կարօտ է, ուստի քեզիկը յանձնեմ  
զինքը :

ՖԲԱՆ. Ինծի յանձնել աւելորդ է . . .  
զիս արդէն կը ճանչնաս :

ԲՕԳ. Իրիկուան դէմ նորէն զինքը  
տեսներու կուգամ : Ուրիշ հիւանդի մը  
պիտի երթամ անկէ դարձեալ Մարգի-  
ղին այցելութիւն պիտի ընեմ :

ՖԲԱՆ. ( հեգնա-բեամբ ) Իլտէկոնտա-  
յին հօրը :

ԲՕԳ. Այո՛, ան առտու յամուսնու-  
թեան մը վրայ խօսք կըլլար :

ՖԲԱՆ. Ի՞նչ, Իլտէկոնտային համար :

ԲՕԳ. Այո՛, բայց կը վախնամ, որ  
աս բանը անոր անհայտ թշնամոյն,  
ամբարշտուան Բոճիկոյին կողմէն դա-

ւաճանութիւն մըն է :

ՖԲԱՆ. Բոճիկոյն . . . Մարգիղին ա-  
ռաջին ամուսնոյն, որբեւայրւոյն արդին  
է . . .

ԲՕԳ. Այո՛ :

ՖԲԱՆ. Խեղճ կնիւնը այսչափ թշու-  
առութեանը պատճառն ան է, Իլտէ-  
կոնտան ինծի քանի մը անգամ ըսաւ :

ԲՕԳ. Ասոր համար նորէն Մարգի-  
ղին հետ խօսիլ կուգեմ, բայց դուն ա-  
նոր բան մը մի՛ խօսիր, կրնայ աւելի  
գեշնալ . . . զգա՛յ՝ եղիր :

ՖԲԱՆ. Ի՞նչ կ'ըսես . . . ես խեղ-  
եմ : Իրաւ պառաւ եմ, եւ երբեմն շատ  
ալ կը խօսիմ, բայց լսելու ատենն ալ  
զիտեմ :

ԲՕԳ. Մնաց բարով Ֆրանչիսկա . . .  
Այդ ի՞նչ գեղեցիկ պատկեր է :

ՖԲԱՆ. Իլտէկոնտային մօրը կենդա-  
նադիրը իրեն չնորհէ, ան ալ խօսոյն զըր-  
կեց :

ԲՕԳ. Ինծի աղէկ է՛երեւար . . . մօրը  
յիշատակը կրնայ իր հիւանդութիւնը  
սաստկացնել : Եթէ առաջ գիտցած ըլ-  
լայի, կ'արգիլէի, բայց հիմա ալ անօ-  
գուտ է : Գարցեալ կ'ազաչեմ որ քովէն  
չ'հեռանաս, եւ կարելի եղածին չափ  
լնանա՛ որ զբաղի, որպէս զի տխուր է՛կե-  
նայ :

ՖԲԱՆ. Հոգ մ'ընէք :

ԲՕԳ. Այո՛ եղկեղին տեսները սրտիս  
մէջ կարեկցութիւն եւ սոսկում կը պատ-  
ճառէ : Անգո՛ւթ ծնողքներ, ինչո՞ւ հա-  
մար հօր մը քաղցր անունը վրանիդ  
կ'առնէք : Եթէ զաւակներնիդ փոխա-  
նակ սիրելու՝ թշուառութեան մատնե-  
լով, ձեր անյարգ փառապիրութիւն ու  
յամառ կատաղութեանը զոհ պիտի ը-  
նէք : ( « Եղանի մը Վրացի է՛իցայ » ) :

ՖԲԱՆ. Կերեւայ որ թմրած է : Ո՛ր-  
չափ աչքունք թողից . . . քիչ մը մխի-  
թարեմ . . . բայց ի՞նչպէս . . . իմ սիրտս  
ալ այնպէս ելած է որ ես ալ մխիթա-



բուերու կարօտ եմ... բայց ջանք ընեմ... Իրոհեկոնտա :

ԻԼՏ . Ո՛վ է... դիտ ո՛վ կը կանչէ :

ՖԲԱՆ . Ե՛ս :

ԻԼՏ . Պո՛ւն ես , գլխած եւ բարերար պահապան :

ՖԲԱՆ . Աշուններդ վերցուր , ոիրելիս , նայէ , այս նոր բնակարանդ առջինէն ո՛րչափ տարրեր է : Այս ոհնեակը ցորեկուան համար է , միւսը զիշերուան համար ( յախ կողմէ սենեակը էն ցորեկէ ) տես դուրսը պարտեղ մը կայ , քեզի հետ հոն պատեղու ալ կրնանք ելլել : Հիմա իմ սենեկիս մօտ ես , սիրուն աղջիկս , մկշտ քեզի հետ պիտի ըլլամ , քովէդ չ'եմ պակսիր :

ԻԼՏ . Ո՛հ , գլխած , եւ աղջիկ կին , ( առջինէլէ ) Բո՛ւն , նամակա Մարգիղին զրկեցիր :

ՖԲԱՆ . Ա՛նիջապէս :

ԻԼՏ . Նամակը տանողըն եկա՞ւ :

ՖԲԱՆ . Այո՛ :

ԻԼՏ . Վախնամ չ'ուզեց տալ... :

ՖԲԱՆ . Մանաւանդ թէ խնդրեցիս կոյն կատարաց :

ԻԼՏ . Ուրեմն ո՛ւր է , ո՛ւր է խանդակով մօրս երկրպագելի պատկերը :

ՖԲԱՆ . Ահաւասիկ :

( Դարձեալէ )

Այս անգամ Սմասեային մեր Արգոյ թղթակիցը կարեւոր լուրեր հաղորդած է մեզ , բայց տեղ չունենալուս համար յաջորդ թուոյն կը թողունք հրատարակութիւնը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԲ

ՎԻՔԹՈՒ ՀԻԿՈ

ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԻ ՄԸ ՎԵՐՁԻՆ ՕՐԸ

Վերթող Հիւկօ մեծանուն կենդանի բանաստեղծին այս ընտիր գործը՝ որ հե-

ղինակին վսեմագաղափարներուն ու աղնիւզագամանցը յայտարարութիւնն է , Եւրօպիոյ մէջ բաւական ազդեցութիւն բրած է , և մենք ալ շատ կը փափաքէինք այս ամենօգտակար հեղինակութեան թարգմանութիւնը մեր ազգին մէջ ալ ըլլար :

Ահա մեր Արգոյ բարեկամ Պ. Բարթոլոմէ . Մաղաքեան ուսումնասէր երիտասարդը այս օգտակար գործը զեղեցիկ թարգմանութեամբ 'ի լոյս ընծայեց : Կը յուսանք որ արգոյ աղջայինք փոխանակ Աւրի - Բարիտ , Եւ - Խոսեյէ , Թօֆալ - Ենթան հետեայէս և այս տեսակ գրքեր կարդալու , պիտի յօժարին՝ զմարդիկ 'ի մարդասիրութիւն և 'ի գութ և 'ի կարեկցութիւն շարժող այս տեսակ ընտիր գործեր կարդալու և թշուառ անձանց օգնութիւն հասնելու , որ քրիստոնէութեան և մարդկութեան պահանջածն է :

Կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով : Պին 10 դուրուշ :

ԳԵՐԵՉՄԱՆԲ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

Կ . Պօլիս

1653

Այս անունով երեսուն և ութ երեւսէ բաղկացեալ տետրակ մը հրատարակուած՝ կը ծախուի ամեն Հայ գրավաճառներու քով : Պին . 5 դշ :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Մեծարդոյ Պ. ձանիկ Արամեանի գլխաւորուն՝ որ Զուխաճի խանի գիմացը 4 թիւ խանութն էր , այժմ Զուխաճի խանը թիւ 85 սենեակը փոխադրած է :

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՐԲ

ՄԻՆԱՍ Մ . ՀԱՅԿ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ԵԻ

ՏՆՈՐԵՆՈՒԹԵԱՐԲ

Պ . ԲՈՐԹՈՒԲԱԼԵԱՆԻ

Ա . ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

Կ . ՊՈԼԻՍ ԻՄԱՄ - ՍԱԼԻ ԽԱՆ